Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
մայիսի 25-ի N 269 - Ա
որոշման

«ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը նախատեսում է կառուցել նախադեպը չունեցող սպորտային մարզահամալիր Լոռու մարզի Դեբեդ համայնքի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի համալիրին կից: Շենքը նախագծվելու է 1 հարկ երկու մասնաշենքով: Շենքի նախնական կառուցապատման մակերեսն է 2,700քմ: Ընդհանուր նախագծային աշխատանքների մակերեսը կազմում է 6,490քմ: Սպորտային մարզահամալիրի կառուցմամբ հիմնադրամը աջակցելու է շրջակա համայնքների բնակիչների և ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի շահառուների առողջ ապրելակերպի բարելավմանը, նպաստելու է ֆիզիկական ակտիվության բարձրացմանը: Սպորտային մարզահամալիրից կարող են օգտվել Լոռու մարզի բոլոր բնակիչները անխտիր, անվճար և նախապես բաժանորդագրվելով: Կենտրոնում գործելու են լողավազան, մարզասրահ, ֆիզոթերապիայի խմբակ, թենիսի բացօդյա խաղադաշտ, վազքուղի և հեծանվային ուղի: Այս ծրագիրը «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի հերթական համարձակ ծրագիրն է, որը կառուցվելու է ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի տարածքում: Հիմնադրամը պատրաստվում է իրականացնել մարզահամալիրի կառուցման և շահագործման աշխատանքները երկու փուլով: Առաջին փուլը նախատեսում է շինարարական աշխատանքների իրականացում և քիչ քանակի կահավորում (այս ծրագիր): Մարզահամալիրի կառուցման ծրագրի ավարտից հետո հիմնադրամը նախատեսում է անմիջապես իրականցնել երկրորդ փուլը, որը ենթադրում է մարզահամալիրի լիարժեք կահավորում և շահագործման 3 տարվա կրթական ծրագիր: Մարզահամալիրը սեփականության իրավունքով պատկանելու է «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամին, ինչպես նաև՝ այն կառուցվում է հիմնադրամի սեփականությունը հանդիսացող տարածքի վրա:

		Համաձայն շահագործման և կրթական ծրագրի երկրորդ փուլի՝ հիմնադրամը նախատեսում է իր շահառուների համար համալիրի բոլոր ծառայությունները մատուցել անվճար, սակայն մարզահամալիրի պահպանման և շահագործման ծախսերը հոգալու համար հիմնադրամը նախատեսում է մատուցել վճարովի ծառայություններ այն բոլոր ցանկացող ֆիզիկական և իրավաբանական անձնանց որոնք չեն հանդիսանում հիմնադրամի «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ մարզահամալիրի շահագործման և կրթական ծրագրի և/կամ հիմնադրամի շահառու: Վճարովի ծառայությունները կօգնեն վճարել մարզահամալիրի ծախսերի մի մասը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Չիլդրեն օֆ Արմենիա ֆանդ Ինք.», Նյու Յորք, ԱՄՆ, 149 5րդ ավենյու, սենյակ 500 (Children of Armenia Fund Inc. 149 5th Ave., Suite 500, New York 10010, USA. և դոկտոր Գարո Հ. Արմենը:
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ քաղ. Երևան 0001, Հյուսիսային պող 1, 8-րդ հարկ, 24 սենյակ, ՀՎՀՀ՝ 02569972)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Լոռու մարզ, Դեբեդ համայնք, համայնքային զարգացում
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 1,762,348,800 ՀՀ դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Լոռու մարզ, Դեբեդ համայնք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020 թվականի հունիսի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
9.	Միջոցառումների նկարագրությունը և	• ՔՈԱՖ ՍՄԱՐԹ մարզահամալիրի լողավազանի մասնաշենքի՝

	ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	- Կմախքի (հիմքեր, արտաքին պատեր, տանիք, լուսամուտ) աշխատանքներ՝ 177,120,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2020 թվականի ապրիլի 1-ից մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը - օդափոխության համակարգի տեղադրման աշխատանքներ՝ 39,360,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի ապրիլի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը, - ջրամատակարարման և կոյուղու ցանցերի կառուցում-մոնտաժային աշխատանքներ՝ 12,595,200 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի ապրիլի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը, - էլեկտրաէներգիայի մատակարարման ցանցի կառուցում-մոնտաժային աշխատանքներ՝ 23,616,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի ապրիլի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը, - էլեկտրաէներգիայի ցածր լարման ցանցի մոնտաժային աշխատանքներ՝ 6,297,600 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի ապրիլի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը, - ներքին հարդարման աշխատանքներ՝ 157,440,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2022 թվականի հունիսի 1-ը: - ՔՈԱՖ ՍՄԱՐԹ Սպորտային մասնաշենք՝ - Կմախքի (հիմքեր, արտաքին պատեր, տանիք, լուսամուտ) աշխատանքներ՝ 432,000,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը, - օդափոխության համակարգի տեղադրման աշխատանքներ՝ 67,200,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2022 թվականի փետրվարի 1-ը, - ջրամատակարարման և կոյուղու ցանցերի կառուցում-մոնտաժային աշխատանքներ՝ 20,160,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2022 թվականի փետրվարի 1-ը,

		- էլեկտրաէներգիայի մատակարարման ցանցի կառուցում-մոնտաժային աշխատանքներ՝ 50,400,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2022 թվականի փետրվարի 1-ը, - էլեկտրաէներգիայի ցածր լարման ցանցի մոնտաժային աշխատանքներ՝ 13,440,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2022 թվականի փետրվարի 1-ը, - ներքին հարդարման աշխատանքներ՝ 336,000,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2022 թվականի փետրվարի 1-ից մինչև 2022 թվականի հունիսի 1-ը: Գենպլանային բարեկարգում՝ - թենիսի բացօդյա խաղադաշտի կառուցման աշխատանքներ՝ 120,000,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2022 թվականի մարտի 1-ից մինչև 2022 թվականի սեպտեմբերի 1-ը, - վազքուղու կառուցման աշխատանքներ՝ 66,000,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2022 թվականի հունիսի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը, - հեծանվային ուղու կառուցման աշխատանքներ՝ 50,000,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2022 թվականի հունիսի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը, - հետիոտն ճանապարհների կառուցման աշխատանքներ՝ 90,720,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2022 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը, Կահավորում և տեխնիկական վերազինում՝ ձայնային և լուսային տեխնիկայի սարքավորումների, կահույքի, կենցաղային տեխնիկայի, մարզասարքերի, ապակիների, և շինարարական նյութերի ձեռքբերում՝ 100,000,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունվարի 15-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը,	- ՔՈԱՖ ՍՄԱՐԹ մարզահամալիրի՝ (երկու մասնաշենքերը ներառյալ) կմախքի, հիմքերի, տանիքի և լուսամուտների կառուցման համար ձեռք է բերվելու 70,848,000 ՀՀ դրամ շին նյութեր, - օդափոխության համակարգեր սպորտային մասնաշենքի և լողավազանի մասնաշենքի համար ընդհանուր 50,280,000 ՀՀ դրամ արժողությամբ,

	ծավալները և նախատեսվող գինը	- երկու մասնաշենքերի էլ. մատակարարման համար անհրաժեշտ նյութեր (մալուխ, լար, մոնտաժային աշխատանքների համար անհրաժեշտ այլ պարագաներ) 29,606,400 ՀՀ դրամ արժողությամբ, - ջրամատակարարման և կոյուղու համակարգերի համար ձեռք է բերվելու խողովակներ, ամրաններ, ամրակներ, պոմպեր, ավտոմատ կառավարման համակարգեր և այլ անհրաժեշտ նյութեր 11,086,080 ՀՀ դրամ արժողությամբ, - հետիոտնի ճանապարհների, թենիսի բացօդյա խաղադաշտի, վազքուղու և հեծանվային ուղու կառուցման համար ձեռք է բերվելու 27,216,000 ՀՀ դրամ արժողությամբ ռետինե ուղիներ, ներկ, տեքստիլային հիմքից ցանց, նստարաններ, լուսավորության համակարգեր, բարձրախոսներ, խոսափողներ և նվագարկիչներ, - շինարարական նյութերի ձեռքբերում (մալուխ, ցեմենտ, տուֆ, ապակի, ավազ, գիպս, երկաթբետոն, լցանյութեր, հիդրոմեկուսիչ նյութեր, հիմնաներկ, ձայնամեկուսիչ նյութեր, ճոպան, պաստառ, ջերմամեկուսիչ նյութեր, տախտակ, մեխ, տրավերտին, ամրան և այլ անհրաժեշտ շին. նյութեր) 732,000,000 ՀՀ դրամի շրջանակներում, - ծրագրի շրջանակներում նախատեսվում է բարեգործական բեռների ներմուծում 100,000,000 ՀՀ դրամի շրջանակներում մասնավորապես ձայնային և լուսատեխնիկայի համակարգեր, բարձրախոսներ, խոսափողներ, կահույք, կենցաղային տեխնիկա, ապակիներ, մարզասարքեր և շինարարական նյութեր: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կնքել պայմանագրեր կապալառուների հետ՝ նախագծային, հսկողական աշխատանքների կատարման և փորձագետների մասնագիտական վերահսկողական ծառայությունների ձեռքբերման համար 150,000,000 ՀՀ դրամի շրջանակներում, մասնավորապես կառուցվող շինության նախագծման համար: Նախատեսվում է կնքել պայմանագրեր կապալառուների հետ շինարարության, ներքին հարդարման աշխատանքների, արտաքին ինժեներական ցանցերի, բարեկարգման աշխատանքների, տեխնիկական վերազինման և այլ ծառայությունների համար, որոնք իրական նշանակություն ունեն ծրագրի ամբողջական կատարման համար՝ 591,312,320 ՀՀ դրամի շրջանակներում:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված	Չեն նախատեսվում:

	կազմակերպական ծախսերը	
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի և Դեբեդի համայնքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացվելու է բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմինը՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ